ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 43-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԹԻՎ 14-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 14-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետին» բառերով,

2) հավելվածի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության» բառերով,

3) հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Խախտման մասին արձանագրությունը կազմելուց հետո իրավասու ստորաբաժանման ծառայողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անհապաղ գրավոր հայտնում է ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանմանը:»:

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«18»____10_____2022թ.

ք. Երևան